ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2022թ. N 154-Ա

«ՄՈՒՇԵՂ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ» Ա/Ձ-ԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով Ա/Ձ «Մուշեղ Սողոմոնյան»-ի հայտը (մտից՝ N 1003, 2022 թվականի հունիսի 28)՝ ***ո ր ո շ ու մ եմ՝***

1. «Մուշեղ Սողոմոնյան» Ա/Ձ-ին 2022 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում տալ Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոց N 24 հասցեում գտնվող ռեստորանում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն (Թույլտվություն N 67):

2. «Մուշեղ Սողոմոնյան» Ա/Ձ-ին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031435 հաշվեհամարին գործունեության ընթացքի յուրաքանչյուր եռամսյակի համար վճարելու տեղական տուրք՝ 15 000 (տասնհինգ հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Մուշեղ Սողոմոնյան» Ա/Ձ-ին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է մինչև ս/թ սեպտեմբերի 30-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2022թ. N 155-Ա

«ՄՈՒՇԵՂ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ» Ա/Ձ-ԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ-ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով «Մուշեղ Սողոմոնյան» Ա/Ձ-ի հայտը (մտից՝ N 1002, 2022 թվականի հունիսի 28)՝ ***ո ր ո շ ու մ եմ՝***

1. «Մուշեղ Սողոմոնյան» Ա/Ձ-ին տալ Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 24 հասցեում գտնվող ռեստորանում 2022 թվականի հունիս–օգոստոս ամիսների ընթացքում ոգելից, ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 68):

2. «Մուշեղ Սողոմոնյան» Ա/Ձ-ին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031336 հաշվեհամարին վճարելու տեղական տուրք՝ 18 750 (տասնութ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ՝ եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Մուշեղ Սողոմոնյան» Ա/Ձ-ին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է մինչև ս/թ սեպտեմբերի 30-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2022 թ. N 156-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԸՄՊԵԼԱՍՐԱՀԻ ՏԱՐԱԾՔԸ ԿԱՐԳԻ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 22-րդ կետերով՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ քաղաքի ըմպելասրահի տարածքը կարգի բերելու և զբոսաշրջիկների ու աջողջարանային բուժում ստացողների համար հարմարվետ դարձնելու նպատակով տարածքից դուրս բերել ժամանցային ծառայություններ մատուցելու համար կայանված մանկական ավտոմեքենաները:

2. Սույն որոշման կատարումը վերապահել «Համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ–ին:

3. Ջերմուկ համայնքի «Համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրենին՝ աշխատանքների կատարման գործընթացում խոչընդոտների բախվելիս դիմել ՀՀ Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Ջերմուկի բաժնին:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վարդան Սարգսյանին և «Համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Գ. Սեդրակյանին:

5.Սույն որոշման պատճեն ուղարկել ՀՀ Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Ջերմուկի բաժնին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2022թ. N 157-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 3-րդ մասով, 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Ջերմուկի բաժնի պետի՝ ս/թ հունիսի 28-ի N 84/1141 գրությունը՝ ***որոշումեմ***

1. Հարուցել վարչական վարույթ Ջերմուկ քաղաքի բնակիչ, «Գնդեվանք» ռեստորանը շահագործող Մուշեղ Արայի Սողոմանյանին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու նպատակով:

2. Վարչական վարույթ իրականացնող հանձնաժողովին՝

1) վարչական վարույթ իրականացնող հանձնաժողովի անդամներին և մասնակիցներին ծանուցել վարչական վարույթի հարուցման, անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին,

2) վարչական վարույթի արդյունքում համայնքի ղեկավարին ներկայացնել վարչական ակտ ընդունելու վերաբերյալ հիմնավոր առաջարկություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2022թ. N 158-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N 336-Ա ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 131-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերին, ինչպես նաև 34-րդ հոդվածին համապատասխան՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 23-ի «Վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողով ստեղծելու և վարչական վարույթ հարուցելու մասին» N 336-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«1. Ջերմուկ համայնքում վարչական մարմինների՝ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից վարչական վարույթ իրականացնելու նպատակով ստեղծել մշտական հանձնաժողով հետևյալ կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Խաչատրյան- համայնքի ղեկավարի տեղակալ

հանձնաժողովի քարտուղար՝ Գոհար Թադևոսյան -համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

անդամներ՝ Արտուշ Սիմոնյան - համայնքի ղեկավարի օգնական

Արման Հայրապետյան-համայնքապի ղեկավարի խորհրդական

Հայկ Դավթյան - իրավախորհրդատուի ծառայություն մատուցող

Արսեն Գառնիկյան- համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Սաթենիկ Կարապետյան– համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Վաղինակ Մանուկյան- համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ:»

2. Հաշվի առնելով Վայոց ձորի մարզպետի՝ ս/թ հունիսի 28-ի N 01 /13.2/4278-2022 գրությունը՝ Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 31-ի ««Ջերմուկ հոթել» ՍՊ ընկերությանը 2022 թվականի ընթացքում Ջերմուկ համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն տալու մասին» N 131-Ա

որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ հղման մեջ «32-րդ հոդվածի 1-ին մասի 16.1-ին կետի» բառերը փոխարինել «35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի» բառերով և «7-րդ հոդվածի 1-ին մասի «ժե» կետի» բառերը փոխարինել «9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2022թ. N 159-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 156-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներին համապատասխան՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 29-ի «Ջերմուկ քաղաքի ըմպելասրահի տարածքը կարգի բերելու մասին» N 156-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում «Համայնքային տնտեսություն» բառերը փոխարինել «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» բառերով,

2) որոշման 4-րդ կետում՝

ա/ հանել «առաջին» բառը,

բ/ «Վարդան Սարգսյանին» բառերը փոխարինել «Աշոտ Խաչատրյանին» բառերով

գ/ «Գ. Սեդրակյանին» բառերը փոխարինել «Պ. Հարությունյանին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունիսի 2022թ. N 160-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 21-ի N 37-Ա որոշմամբ և Ջերմուկ համայնքում աճուրդների անցկացման կանոնակարգի 7-րդ կետով՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի կողմից ներկայացված Ջերմուկ քաղաքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 42/5 հասցեում գտնվող, 10-002-0034-0008 կադաստրային ծածկագրով բնակա-վայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասն օտարելու նպատակով հայտարարել աճուրդ. աճուրդի օր նշանակել սույն թվականի օգոստոսի 1-ը:

2. Հաստատել աճուրդի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված 1-ի:

3. Համայնքի բյուջեում հավելյալ եկամուտ ապահովելու և համայնքային ծրագրեր իրականացնելու նպատակով Ջերմուկ համայնքի կամ «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի սեփականություն հանդիսացող՝ սույն որոշման հավելված 2-ում նշված մեքենա-մեխանիզմները ուղղակի վաճառքով օտարելու նպատակով տալ հայտարարություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 30
Ջերմուկ

Հավելված 2
Ջերմուկ համայնքի ղեկավարի
2022 թվականի հունիսի 30-ի N 160-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ջերմուկի համայնքապետարանը հայտարարում է Ջերմուկ համայնքի կամ «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի սեփականություն հանդիսացող մեքենա-մեխանիզմները ուղղակի վաճառքով օտարելու մասին

1) Թեթև մարդատար ավտոմեքենա, մակնիշը LEXUS GX 470, թողարկման տարեթիվը՝2006 թ., պետհամարանիշը՝ 070LL70, շարժիչի հզորությունը՝ 270 ձիաուժ, վաճառքի գինը՝ 6171000 դրամ:
2) Թեթև մարդատար ավտոմեքենա, մակնիշը GAZ 31022, թողարկման տարեթիվը՝ 2007 թ., պետհամարանիշը՝ 500LU50, շարժիչի հզորությունը՝ 140 ձիաուժ , վաճառքի գինը՝ 884000 դրամ: Ենթակա է վերանորոգման:
3) Թեթև մարդատար ավտոմեքենա, մակնիշը GAZ 3110-121, թողարկման տարեթիվը՝ 2003 թ., շարժիչի հզորությունը՝ 130 ձիաուժ, վաճառքի գինը՝ 510000 դրամ: Ենթակա է վերանորոգման:
4) Բեռնատար ավտոմեքենա, մակնիշը՝ ZIL KO-713 (ZIL 431412, թողարկման տարեթիվը՝ 1991 թ., պետհամարանիշը՝ 214LL70, շարժիչի հզորությունը՝ 150 ձիաուժ, վաճառքի գինը՝ 3230000 դրամ:
5) Բեռնատար ավտոմեքենա, մակնիշը՝ GAZ KO-413 (GAZ 5314), թողարկման տարեթիվը՝ 1989 թ., շարժիչի հզորությունը՝ 120 ձիաուժ, վաճառքի գինը՝ 382500 դրամ:
6) Բեռնատար ավտոմեքենա, մակնիշը՝ GAZ KO-413 (GAZ 53) թողարկման տարեթիվը՝ 1990 թ., շարժիչի հզորությունը՝ 120 ձիաուժ, վաճառքի գինը՝ 382500 դրամ:
7) Անիվավոր տրակտոր, մակնիշը՝ SAME-603, թողարկման տարեթիվը՝ 2006թ., շարժիչի հզորությունը՝ 55 ձիաուժ, վաճառքի գինը՝ 4930000 դրամ:
8) Թրթուրավոր տրակտոր, մակնիշը՝ ԴՏ-75, թողարկման տարեթիվը՝ 1981., շարժիչի հզորությունը՝ 90 ձիաուժ, վաճառքի գինը՝ 382500 դրամ:

Ցանկացողները ներկայացնում են դիմում Ջերմուկ համայնքի ղեկավարին՝ կցելով անձնագրի պատճեն (եթե ֆիզիկական անձ է) կամ հիմնադիր փաստաթղթերը (եթե ընկերություն է): Վաճառքի հանված տրանսպորտային միջոցներին կարելի է ծանոթանալ տեղում, այլ պայմանների ծանոթանալու համար կարելի է զանգահարել 0287-21307 կամ 0287-21981 հեռախոսահամարներով: Գնորդը պարտավոր է դիմումը ներկայացնելու օրվանից 10 օրվա ընթացքում ամբողջապես վճարել վաճառքի հայտարարված գումարը և կնքել առուվաճառքի պայմանագիր:

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հավելված 1
Ջերմուկ համայնքի ղեկավարի
2022 թվականի հունիսի 30-ի N 160-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ջերմուկի համայնքապետարանի՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովը հայտարարում է հետևյալ հողամասի դասական աճուրդով վաճառքի մասին

Լոտ N 1- բնակելի կառուցապատման համար, հասցեն՝ Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս N 42/5, կադաստրային ծածկագիրը՝ 10-002-0034-0008, մակերեսը՝ 0,004 հա, մեկնարկային գինը՝ 180 000 դրամ:

Նշված հողամասում չկան ճանապարհներ, ջրատար, գազատար, կոյուղու խողովակաշարեր և էլեկտրահաղորդման գծեր, սերվիտուտներ, այլ սահմանափակումներ: Աճուրդի մասնակցության վճարը 20 000 դրամ է, որը անկախ աճուրդի արդյունքներից՝ ետ չի վերադարձվում: Նախավճարի չափը՝ մեկնարկային գնի 50%-ը, որը աճուրդի մասնակիցները մուծում են աճուրդի անցկացման օրը: Աճուրդի դրված հողամասի աճուրդի քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Ցանկացողները ներկայացնում են հայտ՝ կցելով անձնագրի պատճեն (եթե ֆիզիկական անձ է) կամ հիմնադիր փաստաթղթերը (եթե ընկերություն է) և մասնակցության վճարի անդորագիրը: Աճուրդի կանոնակարգին, պայմանագրերի նախագծերին և ճարտարապետահատակագծային առաջադրանքներին կարելի է ծանոթանալ տեղում, այլ պայմաններին ծանոթանալու համար կարելի է զանգահարել 028721217 կամ 060747077 հեռախոսահամարներով: Հաղթող կճանաչվի այն մասնակիցը, ով կառաջարկի առավելագույն գին: Աճուրդում հաղթող ճանաչված անձը պարտավոր է 10 օրվա ընթացքում վճարել առաջարկած ողջ գումարը և կնքել առուվաճառքի պայմանագիր: Աճուրդը կկայանա 2022 թվականի **օգոստոսի 1**-ին ժամը 10.00-ին, համայնքապետարանում՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8 հասցեում:

Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդից 3 աշխատանքային օր առաջ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հուլիսի 2022թ. N 161-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 135-Ա ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի N 184-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներին համապատասխան՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 6-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 12/68 հասցեում գտնվող ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին» N 135-Ա որոշման 1-ին կետում կատարել փոփոխություն՝ «24,35» թիվը փոխարինել «34,35» թվով:

2. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 7-ի «Զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային պայմանների ուսումնասիրման հանձնաժողով ստեղծելու մասին» N 184-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«1. Ստեղծել զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային պայմանների ուսումնասիրման հանձնաժողով հետևյալ կազմով.

հանձնաժողովի նախագահ՝ Խաչատրյան Աշոտ- համայնքի ղեկավարի տեղակալ

հանձնաժողովի քարտուղար՝ Կարապետյան Սաթենիկ- համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

հանձնաժողովի անդամներ՝ Հայրապետյան Արման– համայնքի ղեկավարի խորհրդական

Սիմոնյան Արտուշ– համայնքի ղեկավարի օգնական

Առաքելյան Անուշ-համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Մանուկյան Վաղինակ–համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Վահանյան Վարուժան- համայնքի ավագանու անդամ

Խաչատրյան Գոհար- համայնքի ավագանու անդամ

Բագրատյան Արտակ -Կեչուտ գյուղի վարչական ղեկավարի պաշտոնակատար

Մկրտչյան Սևակ- Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 հուլիսի 1
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2022թ. N 162-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 15-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 1/47 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն), Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման, հաշվի առնելով Երևան քաղաքի բնակիչ Ալեքսանդր Տարելի Նալբանդյանի դիմումները (մտից N 472՝ 28.03.2022 թ. և N 1035՝ 01.07.2022 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի հունիսի 27-ի N 27062022-10-0010 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 15-րդ փողոցի N 1/47 հասցեում գտնվող 35,8 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը (արտաքին մակերեսը՝ 38,7 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 38,7 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Երևան քաղաքի բնակիչ Ալեքսանդր Տարելի Նալբանդյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1673 (հազար վեց հարյուր յոթանասուներեք) դրամ (տարածագնահատման 12-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.1673).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2887,5 (երկու հազար ութ հարյուր ութսունյոթ ամբողջ հինգ տասնորդական) դրամ:

4. Ալեքսանդր Տարելի Նալբանդյանը պարտավոր է վճարել՝

1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝64745 (վաթսունչորս հազար յոթ հարյուր քառասունհինգ) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝111750 (հարյուր տասնմեկ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ալեքսանդր Տարելի Նալբանդյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալեքսանդր Տարելի Նալբանդյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 հուլիսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2022թ. N 163-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ PRINOFH T4SR ՄԱԿՆԻՇԻ ՁՅՈՒՆ ՏԱՓԱՆՈՂ ՄԵՔԵՆԱՆ՝ ՌԱՏՐԱԿԸ, ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 10-ի N 14-Ա որոշմամբ, հաշվի առնելով ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի բնակիչ Կ. Մ. Գուլոյանի դիմումը (մտից N 1022, 30.06.2022 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող PRINOFH T4SR մակնիշի ձյուն տափանող մեքենան՝ ռատրակը (թողարկման տարեթիվը՝ 2007 թ.) ուղղակի վաճառքով՝ 54 000 000 (հիսունչորս միլիոն) դրամով օտարել Կոտայքի մարզի Աբովյան համայնքի բնակիչ Կարապետ Մուրադի Գուլոյանին:

2. Սահմանել սույն որոշման 1-ին կետում նշված շարժական գույքի օտարման հետևյալ կարգն ու օտարման պայմանները՝

ա/ գույքի արժեքի վճարումը կատարվում է տարաժամկետ՝ մինչև ս/թ սեպտեմբերի 1-ը,

բ/սույն որոշման առաջին կետում նշված գումարը վճարվում է 900365031542 հաշվեհամարին,

գ/ գնորդի հետ օրենքով սահմանված կարգով կնքվում է սույն որոշման առաջին կետում նշված շարժական գույքի առուվաճառքի պայմանագիր՝ նոտարական վավերացմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 հուլիսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2022թ. N 164-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՆԱԻՐԻ ԻՍԱԽԱՆՅԱՆԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2022 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 5-Ն որոշման, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Նաիրի Իսախանյանի՝ ս/թ հուլիսի 8-ի հայտը (մտից N 1058)՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Նաիրի Իսախանյանին տալ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 4-րդ փողոցի N 4/1 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում առևտրի սրահ կառուցելու շինարարության թույլտվություն:

2. Նաիրի Իսախանյանը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք, ինչպես նաև համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 30 000 (երեսուն հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նաիրի Իսախանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հուլիսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2022թ. N 165-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,08236 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Գնդեվազ գյուղում գտնվող 0,08236 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ այլ, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հուլիսի 12
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2022թ. N 166-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 467-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 425-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 38.1–ին հոդվածներով, Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 93-Ա որոշմամբ, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Արտուշ Սիմոնյանի կողմից մանդատը վայր դնելու հանգամանքը՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 27-ի «Ջերմուկ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների կազմը հաստատելու մասին» N 467-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «Արմենուհի Սաֆարյան» բառերը փոխարինել «Մանան Գևորգյան» բառերով,

2) որոշման 2-րդ կետում «Արմենուհի Սաֆարյան» բառերը փոխարինել «Գոհար Խաչատրյան» բառերով,

3) որոշման 3-րդ կետում «Արտուշ Սիմոնյան» բառերը փոխարինել «Մարինե Մկրտչյան» բառերով:

2. Չեղյալ ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի նոյեմբերի 2-ի «Յուրիկ Արսենյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասի հողատեսքը փոփոխելու թույլտվություն տալու մասին» N 425-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. հուլիսի 13
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2022թ. N 167-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ GAZ KO-413 (GAZ 53) ՄԱԿՆԻՇԻ ԲԵՌՆԱՏԱՐ ՄԵՔԵՆԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 21-ի N 37-Ա որոշմամբ, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Ա. Վ. Զախարյանի դիմումը՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող GAZ KO-413 (GAZ 53) մակնիշի բեռնատար ավտոմեքենան (թողարկման տարեթիվը՝ 1990 թ.) ուղղակի վաճառքով՝ 382 000 (երեք հարյուր ութսուներկու հազար) դրամով օտարել Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Արտավազդ Վարազդատի Զախարյանին:

2. Սահմանել սույն որոշման 1-ին կետում նշված շարժական գույքի օտարման հետևյալ կարգն ու օտարման պայմանները՝

ա/ գույքի արժեքի վճարումը կատարվում է միանվագ,

բ/սույն որոշման առաջին կետում նշված գումարը վճարվում է 900365031542 հաշվեհամարին,

գ/ գնորդի հետ օրենքով սահմանված կարգով կնքվում է սույն որոշման առաջին կետում նշված շարժական գույքի առուվաճառքի պայմանագիր՝ նոտարական վավերացմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. հուլիսի 13
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒԼԻՍԻ 2022թ. N 168-Ա

«Գ.ՊԱՊՈՅԱՆ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի՝ **որոշում եմ.**

1. «Գ.Պապոյան» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04110175) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Հայտնում եմ, որ Ջերմուկի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Գ.Պապոյան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև՝ 28.04.2022թ-ին կնքվել է ՆՋՀ-ԳՀԾՁԲ-22/2.2ծածկագրով Ջերմուկի համայնքապետարանի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի ժամկետը սահմանված էր մինչև 28.05.2022թ.-ը ներառյալ: Հաշվի առնելով «Գ.Պապոյան» ՍՊԸ-ի՝ 23.05.2022թ.-ի 04/2022/ԳՆ/ՋՀ/ԱԴ գրությունը և N ՋՀ-ԳՀԾՁԲ-22/2.2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը՝ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N 1 համաձայնագրով ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգվել է մինչև 27.06.2022թ.-ը ներառյալ: Ջերմուկի համայնքապետարանի կոմից՝ 28.06.2022թ.-ին «Գ.Պապոյան» ՍՊԸ-ին ուղարկված N 731 ելից գրությամբ տրամադրվել է ևս տասնօրյա ժամկետ(որպես ողջամիտ ժամկետ) պայմանագրով ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու և նախագծանախահաշվային փաստաթղթերը Ջերմուկի համայնքապետարան ներկայացնելու համար:

Վերոնշյալ ժամանակահատվածներում «Գ.Պապոյան» ՍՊԸ-ն չի կատարել N ՋՀ-ԳՀԾՁԲ-22/2.2 ծածկագրով պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները և Ջերմուկի համայնքապետարան փաստացի չի ներկայացրել ընկերության կողմից հաստատված համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Համաձայն Ջերմուկի համայնքապետարանի և «Գ.Պապոյան» ՍՊԸ-ի միջև՝ 28.04.2022թ-ին կնքված ՆՋՀ-ԳՀԾՁԲ-22/2.2 ծածկագրով պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի՝ Ջերմուկի համայնքապետարանը միակողմանի լուծել է ՆՋՀ-ԳՀԾՁԲ-22/2.2 ծածկագրով պայմանգիրը, որի ծանուցումը հրապարակված է տեղեկագրում:

2.Հաստատել գործընթացի վերաբերյալ տեղեկությունները համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրել լիազորված մարմնին և «Գ.Պապոյան» ՍՊԸ-ին:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հուլիսի 13
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկ համայնքի ղեկավարի
2022 թվականի հուլիսի 13-ի N 168-Ա որոշման

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատու ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Գ.Պապոյան» ՍՊԸ	ՀՎՀՀ 04110175	Արարատի մարզ,ք.Արարատ, Ղուկասյան 5		X		Որոշման ամսաթիվը՝ 13.07.2022թ Ընթացակարգի ծածկագիրը՝Ջ ԳՀԾՁԲ-22/2

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝
ՍՄԲԱՏ ՊԱՊՈՅԱՆ